ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի <<Վարդենիսի հ. 3 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի դասվարի (17 դասաժամ), մաթեմատիկայի (15 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-. դիմում՝ (Ձև 1), մեկ լուսանկար 3x 4 չափի

-.բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) ,

-.Անձը հաստատոց փաստաթուղթ

-. „Հանրակրթության մասին՛՛ ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

-.Ինքնակենսագրություն (Ձև 5),

-.այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ

-. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ:

-. հրատարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում),

-. որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ ու բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից **մինչև սեպտեմբերի 22-ը ներառյալ** , ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **սեպտեմբերի 24-ին՝ ժամը 14: 00-ին ,** Գեղարքունիքի մարզի Վարդենիսի հ. 3 հիմնական դպրոցում, հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Խ. Ստեփանյան15:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 093239586 հեռախոսահամարով: